Գերյաւելեցաւ Գերյարգելի Աբբայիօր վերոյ
Տեառն Տեառն Յովհաննեսի Վրդպ.ի ողջոյն ի Քրիստոս

Թուղթ Մեծ.

... քաջուհին պատրի ոմն ֆրանսըզ՝ անուն յովսէփ առաքեալ ի գրքապետէ ֆրանսըզ թագաւորին, եկեալ էր այսր ուսանիլ զհայերէն լեզու, որպէս զի յետոյ երթեալ ի ֆրանսայ թարգմանեսցէ զհայ գրեանս զեղեալս անդ ի թագաւորական գրքատան։ Սա պատմէր թէ բազում ձեռագիր գրեանք հայոց կան անդ՝ իբր երկու հազար կտորք, և քանի մի ևս հին ձեռագիր աստուածաշունչք։ Արդ այս պատրի չգտեալ աստ զլաւ ուսուցիչ, ահա չուէ գալ այդր, որպէս զի ի մէնջ ուսցի զհայ լեզուն. զոր ուսումն կարծեմ լաւ կարէ առնել նմա մեր Հ. Վ.րթ. որ ըստ մեծի մասին կայ ի Վենետիկ։ Վասն սորա գիր յանձնարարական գրեալ է առ ձեզ նաև աստ եղեալ ֆռէնկ Վ.իքարն, որ և աղաչեաց զիս, զի և ես գրեցից ձեզ առնել նմա զայս շնորհ ուսուցանելոյ զհայ լեզու։ Ես կարծեմ, եթէ արասցուք նմա զայս շնորհ, բազում բարիք ծագին մեզ. մի՝ զի ի դառնալ նորա ի ֆրանսայ՝ կարէք ընկերակցել ընդ նմին զոմն ի մէնջ, (զոր օրինակ զՀ. Մինասն), զի զձեռագիրս հայոց անդ եղեալս քննեսցէ, և այլն։ Եւ երկրորդ՝ թերևս այսու առթիւ ծանօթս լիցուք մեք ֆրանսըզ թագաւորին, որով և ըստ ժամանակին մենաստան մի ևս անդ ստասցուք։ Ուստի խնդրեմ, զի յամենայն սրտէ հոգ տարջիք ուսուցանել պատրուն զհայ լեզուն ի հասանել նորա այդր։ Ցուսամ թէ այսու լնանին փափաքք մեր Հ. Մինասին, և որոց նորա սակի են ի գտանել զձեռագիր աստուածաշունչս, զորմէ գրէ Գերյարգ. ինձ յայսմ թղթիդ՝ ունիլ հոգս առձեռն բերելոյ զերկու ձեռագիր աստուածաշունչս...։

1769 փետրվարի 12
[Կ. Պոլիս]

Նուաստ ծառայ
Հ. Զաքարիա Վ. Ա. Մ.

ՄՁԴ.

Աւստրիոյ Յովսէփ Բ. Կայսեր դէպի Հռովմ ուղևորութեան շուրջ պատմական համեղ և հետաքրքրական դրուագներ կը կարդանք հետևեալ երեք թուղթերուն մէջ։

Ա.

Գերապայծառ և. Վեհափառ տեառն տեառն Յովհաննես վրտ.իդ
և. աբբայիդ ողջոյն և. սրբազան աչոյն համբոյր

... մեր կրանտուգան հոմ գնաց, նաև իմբերադօրն ևս գնաց, ի քաղաքէս բազում գարտինալք անցանեն ամենայն փառաւորութեամբ. պատճառ իմբերադօրին գնալոյ այս է ասեն, որովհետև բարմայի տուգան բանադրած է և բորդօկալն խռովէ որպէս և սբանիան և նաբօլին. գնաց իմբերադօրն հաշտութիւն առնել անձամբ, որպէս զի կարասցէ առնուլ զաղջիկն բորդօկալին և տալ զքոյր իւր բարմային. և զայս ստիպէ առնել թագուհին վասն խիղճմտանացն. քանզի պատմեն աստ, թէ կօվերնադօրն տեղւոյս գրեալ է մեռեալ իմբերադօրին գանկատս բազում վասն եպիսկոպոսի միոյ երկրիս, և իմբերադօրն հրամայեալ է աքսորել զնա. և տեղւոյս իշխանն առաքեալ է սօլտաթս մինչ էր յանկողին եպիսկոպոսն, և այնպէս անարգաբար տարեալ մինչև արտաքոյ քան զիւր տիօչեզին, և ապա ասացեալ նմա զհրամանն կայսեր գնալոյ ի հոմ. եպիսկոպոսն վաղվաղակի առեալ թուխթ ի ձեռին բանադրեաց գրով զկայսրն, զիշխանն քաղաքիս, և զպատճառ եղօղսն զսօլտաթսն որք կատարեցին զհրամանն և զմասնակից եղօղս, և ամրացոյց յոմն բողոցին